ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Երևան, 26 Յուլիսի 1975 թ.

Տ. Եղիշէ Սրբազան Պատրիարք
Հայոց Երուսաղէմի

Ամենապատիւ Պատրիարք Հայր.

1975 թ. Յուլիսի 25ին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Վազգէն Ա Կաթողիկոսը, հանդիսաւոր պարագաներում Մաշտոցեան Մատենադարանին յանձնեց Ձեր և Սրբոց Յակոբեանց Միաբանութեան թանկագին նուէրը՝ Թորոս Ռոսլինի 1268 թ. ընդօրինակած և նկարազարդած փառահեղ Աւետարանը: Հայրենանուէր այդ քայլով Դուք ոչ միայն հարստացրեցիք Մեսրոպ Մաշտոցի անունը կրող Մատենադարանի ձեռագրաց հաւաքածուն, այլ և հնարաւորութիւն ընձեռեցիք Մայր Հայրենիքի արուեստասէր ու գիտական հասարակայնութեանը ուսումնասիրելու և գնահատելու միջնադարեան մեծ մանրանկարչի ստեղծագործութիւնը՝ բուն ակունքից. Ձեռագիրը մուծուեց հայերէն ձեռագրերի հաւաքածու 10675 թուահամարի ներքոյ:

Մաշտոցեան Մատենադարանի գիտական խորհրդի և անձնակազմի անունից սրտաբուխ շնորհակալութիւն ենք յայտնում Ձեզ և Միաբանութեանդ այդ անգնահատելի նուիրատուութեան համար և բարեմաղթում արևշատութիւն ու նոր յաջողութիւններ ի նպաստ մեր ժողովրդի բազմադարեան մշակոյթի:

Յարգանօք՝

ԼԵՒՈՆ ԽԱՉԻԿԵԱՆ

Մաշտոցեան Մատենադարանի Տնօրէն

digitised by A.R.A.R.@